

չէխերն մատնեցին պարոնին, թէ Գրիգոր
մաթրանն նենկիւ եւ թշնամութեամբ ընդ
Ֆռանկս միարանեալ մաթառիս շինէ եւ ամ-
բոց՝ պարութ եւ զէնք պահելու. զի քաղքէն
զուրս էր Սուրբ Փրկիչն. եւ յոյժ տաւի արին, 235
որ պարոնն կալաւ զնա եւ եղ ի բերթն. եւ նա
ոչ հոգայր զիւրմէ, որ վճիռ հատին մահուան.
այլ միշտ առաքէր՝ թող բանեցնեն. զոր ետոյ
եւ ինքն ազատեցաւ: Դարձեալ օր մի մինչ էր
ի վերայ արվեստաւորաց՝ չէխերն ի վերուստ 230
ընկեցին քար մի ի վերայ գլխոյն. զոր անկաւ
ի վերայ ձեռաց եւ զրութ մատն տրորեց. որ
չունի դայն մատն մինչեւ ցայսօր: Եւ զի էր
ճարտար, հանճարեղ եւ զրամի ուժով զամե-
նայն ինչ զոր կամէր՝ կատարէր. մինչ զի պա- 235
րոնն եւս ամաչէր եւ պատկառէր ի նմանէ:
Որոց զյսքունս թողեալ, զի մի բաղմութիւն
խօսից տաղտկութիւն առնէ լսելեաց եւ յա-
ճախութիւն բանից ձանձրութիւն եւ քուն ամէ
աչաց: Չոր ես յետեալ ապրկարս մոխրա- 240
մած զիմօք եւ արտասովաթոր աչօք հայցեմ
ապէնիազ Տեառնէն, զի ընդ երկայն աւուրս
արասցէ եւ պարագայծ ամօք պահեսցէ զնա
մինչեւ ի խորին ծերութիւն, անասան կենօք
ի պայծառութիւն սուրբ եկեղեցեաց եւ ի պար- 245

225 ոյժ: — 233 օր չկայ:

մա՞նց չինութիւնը) 1613—1616 տարիներուն Գրիգորի
ձեռօք եղած է. տե՛ս Աղաւնունի, Հայկական հին
վանքեր եւ եկեղեցիներ Ս. Երկրին մէջ. Երուսաղէմ
1931, էջ 82—84: